

Մուշ՝ Հաց կտրելու ծիսակատարութեան քահանան կը հարցնէ հարսին հօր՝ «Աստուածային հրամանաւ, կանոնիւք սուրբ Հայրապետաց, քու աղջիկդ, Գիւլիգարը, տուի՞ր այս ինչ մարդու այս ինչ անուն տղային»: Ա.Հ. ԻԶ. 158:

Խնամախօսութեան դացած պահուն, երբ կը մտնէ դռնէն ներս պէտք մասնաւորապէս նկատի առնուի բարեյաջողութեան ազդակը. այսպէս խնամախօսը ներս մտած պահուն կ'ըսէ.

— Էկայ հա՛, աջ ոտքս եմ քցում:

Հարսին հայրը կը պատասխանէ.

— Բարով ես եկեր ես. Աստուած խերլի անա. Ա.Հ. ԺԶ. 11:

Հարսնացուի տէրը՝ փեսացուի հօր. «Զեր ոտնամուտը բարի լինի» Ա.Հ. Գ. 212:

Հարսին մայրը՝ Զեր վոննը գալուքը բարի ինի. ուրախ բարեկամ ընիք, Ա.Հ. Բ. 121:

Լեզուական զգուշութիւնը հարսանեկան օրերուն յանգած է կերպական արդելիքի: Փեսացուն շմատնանշելու մտահոյութիւնը կը պարտադրէ մասնաւորապէս խուսափել անոր անունը տալէ. այդ պարտականութիւնը ի դօրու է երբ հարսանեկան արարողութիւնը կը սկսի փեսացուին համար՝ սափրուելու ծիսակատարութեամբ: Փեսացուն պէտք է ածիլուի եթէ նա ածիլի կարօտ մազ ալ չունենայ կղակին վրայ, Ա.Հ. Գ. 138. նաեւ անոր գլխուն մազերը պէտք են առանձին խնամքով ու հանդիսութեամբ կտրուին: «Ա.յդ ժամանակից, — որ հանդիսապէս կը սափրուի — նորափեսային անուանում են թագաւոր» Ա.Հ. Է—Ը. 162, ԺԶ. 23: Այս անունը հետեւապէս սափրուելու արարողութենէ յետոյ միայն ուղիղ է գործածել, եւ անոր ընդհանրացումը — եթէ հայկական գաւառներու մէջ եւս եղած է — պարզապէս հաւատալիքային ազդակի տկարացումով կամ անգիտացումով պէտք է մեկնել: Փեսացուն «թագաւոր» մեփէ կ'անուանուի նաեւ վրացերէնի մէջ, ինչպէս գաւառ. ուսերէն КНЯЗЬ «իշխան», 2. նորափեսայ», ՀԱԲ Բ. 1074—1075, ինչ որ հասարակաց գիծ մը կը մատնանշէ: Հայկական յորջորջումը հիմնուած է գործնականին անով որ փեսան ըստ հայկական սովորութեան «թագ» կը կրէ արարողութեան ժամանակ: Մեր գաւառականներէն ոմանք սակայն արդէն կը զանազանեն՝

Պետութեան զուլա	Նորափեսայ
Զէյթուն՝ թագ՝ովիւր	թագ՝վիւյ, թագ՝վիւր
Ազուլիս՝ թագա՝վօ՛ր	թագ՝ըվիւր, թագ՝ա՝վիւր
Հաճըն՝ թագա՝վոյ	դ՛ագ՛ոյ

Թէ ո՛րքան լուրջ էր այս անուանափոխութեան պարազան այն տեղ ուր դեռ հին հայկական սովորութիւնները համեմատաբար մաքուր մնացած էին, կ'ապացուցէ Զէյթունցիներու վարուելակերպը, որոնք «Աինճ պատիժ կոտոն, տավոր կոտոն առնու» անոր որ թագաւորին «ուղիարդ անոնը ճիւղոյ» հարսանեկան օրերուն, Ալլահճվերտեան, Ուլնիա կամ Զէյթուն, Կ. Պ. 1884, 71:

- Համառօտութիւններ.
- ՀԱԲ = Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, Պետհրատ:
 - Ա.Հ. = Ազգագրական Հանդէս, Թիֆլիս 1896—1916:
 - ՀԲԲ = Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ 1912:
 - ԳԲ = Աճառեան, Հայերէն Գաւառական Բառարան, Թիֆլիս 1913:
 - Հոօ = Ա. Ահարոնեան, Հոօ կիներ, Թիֆլիս 1897:

Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆ

ՄՈԿԸՑ, ԽԻԶԱՆԻ ԵՒ ՅԱՏԱԽԻ ՎԱՆՔԵՐԸ

(Շարունակութիւն:)

32. Ս. ՄԻՆԱՍԻ ՎԱՆՔԸ

Մոկաց գաւառին մէջ, Նանէնից կամ Առնաձորի վերեւ եղած բարձր լեռան մը ստորոտը, մէկ ժամ հեռու Յաղինէն, հիմնուած է Ս. Մինասի վանքը (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 162): Ունի քարակերտ տաճար մը, որուն նորոգման յիշատակութիւնն է՝ «Ի թուին ՌՃԾԳ (1704) նորոգեցաւ սուրբ տաճարս կրկին (ե՞րբ շինուած եւ ե՞րբ առաջին անգամ նորոգուած), եւ Խաչատուր սարկաւազս նորոգեցի զտաճարս այս ի յիշատակ ծնողացն իմոց: Ստեփաննոս... Եպիսկոպոս...: Եւ Խաչիկ սարկաւազս շինեցի զկեղեցիս ի յիշատակ ծնողացն իմոց եւ կենակցին իմոյ եւ որդւոց (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199):

Նախորդին մօտ կայ հետեւեալ հնագոյն արձանադրութիւնը՝ «Յիշեցէք զմզս. Ներսէս գյուլթայ կարապետ թիւ. ՊԾԵ (1405) յիշ. ի Գրիստոս զնկզս. Եպիսկոպոս» (անդ):

Նանենցի մէջ «ընդ հովանեաւ սուրբ Սարգսի (կամ գիւղին եւ կամ վանքին եկեղեցւոյն անունը) կը դրուին 1676ին Աւետարան մը (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. վասպ., էջ 948), 1682ին դարձեալ Աւետարան մը (Անդ, էջ 958) եւ 1683ին Սաղմոսարան-Ժամագիրք-Տօնացոյց (հմմտ. Աճառեան, Յուց. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 98) : Հոս 1696ին կը դրուի ուրիշ Աւետարան մը (Բարխուդարեան Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 225) :

Նանէնից կամ Նանենց Ս. Մինաս կը վերաբերէր Աղթամարի, ունեցած է ընդարձակ վարելահողեր ու անտառներ : Ուխտի օրն եղած է Կանանչ Կիրակի (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199) :

33. ՅԻՐԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Մոկսի Ակնդաշտայ Ս. Աստուածածնի մօտերը, Պուլենց Ս. Նշանի հարաւակողմը, Յիր գիւղի կուշտը կը գտնուի Ս. Աստուածածնի նուիրուած սրբավայր մը, որ գուցէ վանք ալ եղած ըլլայ (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199) : Մարտիրոս տանուտէրը 1471ին Աւետարան մը «գծագրել» կու տայ եւ ապա՝ «ետուն զսա ընծայ եւ նուէր ի յաստուածապահ գեօղ՝ ի Յիր ի դուռն սուրբ Աստուածածնին» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. 1471, էջմիածին Թ. 2632) :

34. Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՎԱՆՔԸ

Խիզանի վանք-եկեղեցիներէն է Ս. Յարութիւն, որ Ձեռագիրներու յիշատակագրութիւններու մէջ ստէպ Ս. Աստուածածնի, Ս. Գրիգորի, է. խորանաց եւ ուրիշ եկեղեցիներու հետ կը յիշուի (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 262—264. Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., Թ. 1476, 1590, 1591, 1593, 1594, 1595, 1598 եւն) : Ս. Յարութիւն եկեղեցւոյ երկարութիւնն է 56, իսկ լայնութիւնը՝ 42 ոտք : Ունի եօթը լուսամուտ (Նաթանեան, Արտօսը Հայաստանի, էջ 194—195. Բիւզանդիոն, 1900, Թ. 1074) :

35. ՇԻՐՆԻՑ Ս. ԳԷՈՐԳԻ ԿԱՄ ՍԿԱՒԱԹԱԿԻ ԿԱՄ ԼՐՆԻՍԻ ՎԱՆՔԸ

Սպակերտի հարաւ արեւմտեան կողմը, բարձր լեռնադաշտի վրայ Շիրնից գիւղի մօտ եւ Մար գիւղէն 4 ժամ հեռու կառուցուած է Սկաւառակ վանքը, որ իր անունն

առած է անձանօթ նահատակի մը զանկին սկաւառակէն, որմէ մասունք մը ամփոփուած է արծաթեայ տուփի մը մէջ : Կոչուած է նմանապէս Ս. Գէորգ : Դարձեալ անուանուած է Լրնիսի Սկաւառակ վանք համանուն գիւղին մերձ ըլլալուն համար (Լուսայ, 1900, Ա., էջ 227) : Չորս դին խիտ անտառներ կան, ունի մաքուր ջուր եւ մաքուր օդ : Վանքին սաճարը, որ պատկառելի հնութեան եւ հայկական հին ճարտարապետութեան հրաշակերտ կը թուի ըլլալ, շրջապատուած է եւ խճողուած մութ, խոնաւ, անկարգ եւ անկանոն խցիկներէ, եւ զոմերէ (Շէրենց, Սրբավայրեր, էջ 153. Արեւելք, 1889, Թ. 1748. Նաթանեան, Արտօսը Հայաստանի, էջ 198) : Տաճարը 20 քառակուսի ոտք է, ունի մէկ խորան եւ երեք լուսամուտ, իսկ դարպասն 30 ոտք քառակուսի, ունի երկու սիւն եւ երեք լուսամուտ : Գմբէթը՝ բարձր եւ սիրուն (Նաթանեան, անդ, էջ 198) : Շինութեան թուական չկայ :

Կան քանի մը յիշատակագրութիւններ, որոնք Ս. Գէորգ (Մոկաց) կը յիշեն, սակայն կարելի չէ ստուգօրէն հասկնալ թէ ո՞ր Ս. Գէորգի մասին է : Ա՞յս թէ Փութկու Ս. Գէորգը կ'ակնարկուի : Վերջինիս մասին գրուած ատեն անոնք նկատողութեան պիտի առնուին (հմմտ. անդ) : Հետեւեալ յիշատակագրութիւնը ստուգապէս այս վանքին կը հայի : Մահդասի Խնդու Աւետարան մը կը նուիրէ՝

«... Եւ ետ զսա (աւետարան) ի սուրբ ուխտն եւ յանուանի հռչակաւոր տեղին ի դուռն սրբոյն Գէորգեայ զաւրավարին, որ հանապազ հրճուին նովաւ մանկունք սուրբ եկեղեցւոյ սրբասնեալ կրանաւորքն Յովանէս, Ստեփանոս, Ատոմ, Աստուածատուր, Թումայ, Յովանէս եւ Մխիթար եւ հանապազ յիշեն յաղաթս իւրեանց... : Աստուած սղորմի ասացէք Ատոմի հողոյն, որ ետուր արտ մի Բաղբանաց եւ աղէկ այգի մի, զարդն ծահեցին եւ ի Շիրինենց ներքեւ վանիցն փոխան տուին ի վերեւ լճին Ս. Գէորգեայ...» : Ապա կը պատմուի թէ «զաւետարանս գողացան ի Շիրինեց վանացն» բայց Պետրոս... Լալիսկոսոս զայն ազատելով կը վերադաձնէ (Լալայեանց, Յուց. հայ. Ձեռ. վասպ. ի, էջ 213—214—216) :

Շիրնից Ս. Գէորգ օժտուած էր ընտիր վարելահողերով, անդ ու անդաստանով : Ուխտի օրն էր Կանանչ Կիրակին : Քահա-

նայական տան մը ժառանգութիւն եղած է : Վանահայրներէն եղած են Յովհաննէս եւ Սահակ քահանաները : Կողոպուտի ենթարկուած 1895ին (Նաթանեան, Արտուր Հայաստան, էջ 198. Արեւելք, 1889, Թ. 1748. Շէրենց, Սրբավայրեր, էջ 153. Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, էջ 522) :

36. ՈՒՐԱՆԻՍԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ուրանիս գիւղէն քսան բոպէ հեռու : Գեղեցիկ է իր շէնքը եւ վայելուչ : Տաճարին երկարութիւնն է՝ քառասուն ոտք եւ լայնութիւնն՝ երեսուն : Ունի երեք խորան եւ վեց լուսամուտ : Քիւրտերէն ապականուած ու քանդուած (Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 176 եւ 197) :

Վարդ խաթուն եւ ուրիշներ «ստացան զսուրբ աւետարանս եւ եղին յիշատակ անջինջ ի դուռն Ուրանից³⁶ սուրբ Աստուածածնին» (Լալայեանց, Յուց. Հայ. Ձեռ. Վաստ. ի, էջ 780) :

37. ՊՈՒԼԵՆՑ Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ

Մոկսի սրբավայրներէն : Կ'իյնայ Ակն-դաշտի հարաւը. Փասաձորի հիւսիսային թեւին վրայ : Տաճարը կանդուն, բայց հինցած ու ամայի (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199) : Վանք ըլլալու մասին յիշատակութիւն չունինք³⁷ :

38. ՍԱՐԻ ԿԱՄ ՀԶԱՐՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Խիզանի Սորի³⁸ (կամ Սորիկ եւ Սովորի) գիւղէն քառորդ հեռու, լերան մը մերձ բարձրացած է Ս. Աստուածածնի վանքը : Եկեղեցին 25 ոտք քառակուսի է եւ ունի խորան մը եւ երեք լուսամուտ : Գմբէթաւոր է : Քրտերէն կողոպտուած (Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 199. Լուսայ, 1900, Ա., էջ 223, Բիւզանդիոն, 1898, Թ. 508) :

³⁶ Ուրանցի մէջ ժամանակ մը կ'ապրի Դանիէլ զբէլը (Նօտարք, էջ 107) : Դարձեալ «ընդ հովանեաւ սուրբ Նշանիս» Թումայ 1433ին Աւետարան մը կը գրէ (Նօտարք, էջ 102 եւ Լալայեանց, Յուց. Հայ. Ձեռ. Վաստ. ի, էջ 365) : — Հմմտ. Ուրանէ Ս. Աստուածածին՝ Ռչտունիքի մէջ :

³⁷ Կը յիշուի նոր Շինայ անապատ մը, զոր չէ կարելի ասոր հետ միացնել (Կարենեանց, Յուց. Հայ. Ձեռ. էջմ. Թ. 155) :

³⁸ Մոկաց աշխարհի մէջ կայ Սուրս գիւղը, ուր կը գրուի քանի մը ձեռագիր (Հմմտ. Գամաղիէլի վանքը եւ Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. 1595, 1631, 1647, 1656. Գալէմքեարեան, Յուց. Հայ. Ձեռ. Միւնիսէնի, էջ 32—33. Քննական Հրատ. Մ. Խորենաց-ւոյ պատմութեան, 1913, էջ ԺԷ) :

1597ին կ'աւարտի Աւետարան մը՝ «ի սուրբ ուխտս Սորուայ³⁹ ի դրունս սուրբ Աստուածածնին (երկու տող ջնջուած) եւ յաւաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Գրիգոր հէրպետի» (Լալայեանց, Յուց. Հայ. Ձեռ. Վաստ., էջ 754), իսկ 1601ին Թումայ արեւդայ Սորոյ վանքի մէջ կը գրէր Աւետարան մը (անդ, էջ 796), ինչպէս անկէ շատ յառաջ «ի ձորս Կեցանայ⁴⁰ ի գեաւդս որ կոչի Սորս-վանք» կը գրուէր դարձեալ Աւետարան մը (անդ, էջ 428) եւ Վարդան 1452ին «ի սուրբ ուխտն Սէրիվանք ընդ հովանեաւ Ս. Գէորդայ եւ սուրբ Նշանիս» կ'արտագրէր Աւետարան մը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. ի Պոտուրեանէ) :

Մեր Մատենադարանին Թ. 694 Հատակոտոր ձեռագիրներու⁴¹ մէջ կայ նաեւ Սորուայ վանքի կոնդակը, որուն մէջ վանքին պատմութիւնը շարահիւսուած է. այս է՝ Թէ Ս. Թաղէոսէն հիմնուած է եւ Ս. Աստուածածնի քողովն ու բժշկարար աղբիւրով օժտուած եւ զարգացած, բայց Քիւրտերէն զնասուած եւ բարերար ձեռքերու կարօտ մնացած :

Սորի Ս. Աստուածածնի վանքը Սկաւառակ Ս. Գէորգի, Պարաձորի, Բազէնի Ս. Աստուածածնի եւ Գամաղիէլի վանքերու⁴² հետ 1895ին կը կողոպտուի եւ կը քանդուի (Արարատ, 1896, էջ 89 եւ 246. Հմմտ. եւ վերը) :

39. Ս. ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔԸ

Վարդան Աշխարհադիրը Մոկաց գաւառի մէջ կը յիշէ Ս. Վարդանայ վանք մը (Saint-

³⁹ «Բիւզանդիոն»ի մէջ կը գրուի Թէ Սորուայ Ս. Աստուածածնին մերձ է Սորի գիւղի (1898, Թ. 508) :

⁴⁰ Ալեւոր անուն Աւետարան մը 1601ին կը գրուի «ի վանքս Ս. Աստուածածնի, որ կոչի Կեցան ի հայրապետութեան փոքր Գրիգորիսի Աղթամարայ» (Արեւել. Մամուլ, 1899, էջ 237) :

⁴¹ Հմմտ. եւ Տաշեան, Մայր Յուցակ, էջ 1033, Թ. 567 եւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Բ., էջ 172) : — Հայ վանքերու համար արուած կոնդակներու պատմութիւնն ալ իր մէջ հետաքրքրական է, մանաւանդ անոնց տարածումի ու հաւաքումի հարցերը : Այսօր քանի՞ — հեռաւոր — վայրերու մէջ կը դառնուին անոնք. այսպէս Գողթնի Ս. Խաչի կոնդակն իր Թովմաս առաջնորդին հետ մինչեւ Բեղդիա դացած է. Հմմտ. Սարուխան Ա., Բեղդիա եւ Հայերը, Վիեննա 1937, էջ 138—139 :

⁴² Սորիայ կամ Մորրայ Ս. Կարապետի եւ Մոկաց աշխարհի ու Սպակերտի դեռ ուրիշ քանի մը վանքերու մասին Ռչտունեաց գաւառի վանքերու նկատմամբ գրուած ատեն արդէն խօսած ենք. Հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1940, էջ 21 : Սորիայ Ս. Կարապետի կոնդակին համեմատ Գրիգոր Աղթամարցին սոյն վանքին վանահայր եղած է (Վան-Տոստ, 1912, Ա., Թ. 11—12, էջ 175—176) :

Martin, Mémoires II, էջ 428), որ Առնոսի ստորոտը շինուած է (Բիւզանդիոն, 1904, թ. 2230, Նօտարք, էջ 197), մինչ Պալեան կը խորհի զայն Գաւաշ⁴³ գիւղի Ս. Վարդան վանքին հետ նոյնացնել (Բիւզանդիոն, 1900, թ. 1027): Բայց կրնայ ըլլալ նաեւ որ Պալեան Մոկաց այս վանքը կ'ակնարկէ, երբ կը գրէ թէ՛ Վանայ Նոնենից (Նոնենից) ձորին մէջ կայ Ս. Վարդան անուանով վանք մը, որ նմանապէս Նոնենից Ս. Նշան կամ Ս. Մինաս Նոնենից⁴⁴ կոչուած է (անդ, թ. 1027):

Մոկաց Ս. Վարդանի վանքին մէջ 1572ին Սրապիոն Աւետարան մը կը գրէ՝ «Ը. յանապատիս (որ) սուրբ Վարդան կոչի յերկիրն թրքաց, որ այժմ (ի) Մոկս կոչի ի յօտն Առնաւասա եւ յայլ համօրէն եղբարց իմոց որ կան ընակեալ յայս սուրբ Վարդան...: Ողորմեա Քրիստոս Աստուած Դաւիթ բարունապետին, որ միջնորդ եւ կամակից եղաւ սուրբ աւետարանիս, որ հայրախնամ խնամէ ի վերայ իմ» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասսպ.ի, էջ 676): Անկէ յառաջ 1560ին ալ ի «սուրբ Վարդան վանք Մոկաց» կը գրուէր ուրիշ Աւետարան մը:

40. Ս. ՎԱՐԴԱՆԻ (ՆՈՆԵՆԻՑ) ՎԱՆՔԸ

Յիշատակագրութիւններու մէջ կը հանդիպինք Նոնենից Ս. Վարդան անուն վանքի մը, որ գուցէ նախորդին հետ նոյն ըլլայ (հմմտ. նախորդ վանքը, ուր եւ Պալեանի վարկածը եւ տեղեկութիւնը): Աւետարան մը կը կազմուի՝ «Ի յերկիրն Մոկաց ի վանքն Նոնենից ի սուրբ ուխտն սուրբ Վարդան» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասսպ.ի, էջ 296): Կարեւոր է հետեւեալ յիշատակագրութիւնը՝ «Փառք... արդ նորոգեցաւ... եւ իմ տեսեալ զսա... ետու ԴՏԻ դէն Թումայ եպիսկոպոսին ի վանքն Ճալեթու ի Շաքի եւ առի զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոցն հաւրն Կարապետին եւ մաւրն Սոչխաթունին եւ հանգուցեալ հաւրեղբայրն իմ Գրիգոր կրանաւորին, որ մարտիրոսական մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս: Արդ ես Մխիթար մեղապարտ եպիսկոպոս ի յերկրէն Մոկաց ի վանացն սուրբ Վարդանայ ի գեաւաբաղա-

բէն Նանենից գնեցի զքարոզգիրքս ի Շարուան եւ կազմեցի ի յերկիրն Գեղամայ ի գեաւղն, որ կոչի Վարդենիս, ի դուռն սուրբ Աստուածածնին ի յառաջնորդութիւն գաւառիս պարոն տէր Մելքիսեթին եւ յիշխանութիւն պարոն Շահնազարին, որ է յաղթող զօրավար ի վերայ այլազգեաց» (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2156):

Պալեան Վասպուրականի մէջ Ս. Վարդան անունով չորս վանք գիտէ, առաջինը Վանի ծովեզերքը, երկրորդը Արեղ գիւղի մերձ, երրորդը Գաւաշ գիւղի դիմացը եւ չորրորդը Նոնենից ձորի մէջ (Բիւզանդիոն, 1900, թ. 1027): Ասոնց մասին թէեւ խօսած ենք, բայց հետագային մանաւանդ առաջինին մասին պիտի անդրադառնանք, ինչպէս պիտի խօսինք Սեղայ, Ս. Յովաննէսի, Դերեկի Ս. Աստուածածնի եւ Մարութայ կամ Մարութայ Բարձր Աստուածածնի եւ ուրիշ քանի մը վանքերու վրայ:

41. ՓԱՍՍՅ ՎԱՆՔԸ ԿԱՄ ԳԵՂ ԱՆԱՊԱՏԸ

Փասայ կամ Փեսի վանքը կանգնած է Մոկս գիւղաքաղաքին արեւմուտքը բարձրացած լեռան վրայ, Լճան գիւղին մերձ, Փութիւն հովտին մէջ: Օժտուած է շատ զուարճալի տեսարանով, ընտիր օդով, պաղ ջրով, հոծ անտառներով եւ արօտավայրերով: Եկեղեցին կին մը շինել տուած է (Ազգր. Հանդ. 1916, էջ 209 եւ Բիւզանդիոն, 1903, թ. 2199):

Այս վանքին մէջ Իսրայէլ եռանդուն գրիչը շատ մը օրինակութիւններ կ'ընէ. 1447ին կը գրէ Աւետարան մը «յերկիրս Մոկաց ի գիւղս որ Փասավանք կոչի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գրիգորին եւ Փրկչին» (Նօտարք, էջ 156. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասսպ.ի, էջ 398): Դարձեալ 1455ին ուրիշ Աւետարան մը (Նօտարք, էջ 178. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասսպ.ի, էջ 421—422), 1456ին նորէն Աւետարան մը (Ակինեան շ. Ն., Հաւաք. Յիշատակ. Տէր Աւետիսեանի Նոր Ձուղայի հայ. Ձեռագրաց ցուցակէն թ. 57) 1463ին կրկին Աւետարան մը (Բարխուդարեան, Արցախ, էջ 274), 1466ին եւ 1473ին նորէն Աւետարաններ (Նօտարք, էջ 225—226. Բարխուդարեան, անդ, էջ 146. Հանդ. Ամս., 1917/18, էջ 144): Իսկ 1466ին եւ 1469ին կ'արտադրէ Յայսմաուրք (հմմտ. Առերդի վանքը, Նօտարք, էջ 225. Ակինեան շ. Ն., Հաւաք. Յի-

⁴³ Գաւաշ Ռչտունեաց գաւառի նոր վիճակներէն է. հաւանականօրէն անոր համանուն հին գիւղէն այդպէս կոչուած:
⁴⁴ Մանօթ է Նանէնից Ս. Մինաս վանքը, հմմտ. վերը:

շատ . Տէր Աւետիսեանի նոր Զուղայի հայ .
 Ձեռագրաց ցուցակ , էջ 227 , անտիպ) : Յայս-
 մաւուրքի մէջ կայ թէ Փասալանքի արեղա-
 ներէն մին դրախտը կը տեսնէ . եւ հոն կը
 դտնէ վանքին Ռուսինոս տնտեսը (հմմտ .
 Տաշեան , Մայր ցուց . , էջ 82) :

42. ՓՈՒԹԿՈՒ Ս . ԳԷՈՐԳԻ ԿԱՄ ՍԱՐԻ ՎԱՆՔԸ

Վասպուրականի մաս կազմող Մոկայ
 դաւառի բաժնին մէջ , Արսոս լեռնաշղթայի
 եզերով լեռան արեւելահայեաց լանջին վրայ
 շինուած է Ս . Գէորգի վանքը , որ կոչուած է
 Փուլիու կամ Փուլիոյ Ս . Գէորգ եւ Սարի
 վանք (Սրուանձտեանց , Համով Հոտով ,
 էջ 89 . եւ Բիւզանդիոն , 1900 , թ . 1194) :

Վանքին հին շէնքերէն շատ քիչ բան մնա-
 ցած է : Պաշատուր կաթողիկոսը 1887ին ա-
 նոր այժմեան Ս . Գէորգ անուն մատուոն ու
 գմբէթը կառուցանել տուած է : Աղթամա-
 րեան Աւետարանի մը սկիզբը կայ . «Վեհա-
 փառ Պաշատուր կաթողիկոս Ռչտունի ի
 Մոկա այցելութեան զնալու առթիւ Փուլիու
 Ս . Գէորգ վանուց ամբողջ շինութիւնք ի հի-
 մանց նորոգեց , գերեզմանի վրայ հոյակապ
 մատուռ մը կանգնեց , շինեց նաեւ աղբիւրի
 ջրուղին ծախիւք մեծի տանն Արծրունեաց ,
 յամի Տեառն 1887 , Յուլիս 16ին : Սոյն միջո-
 ցին սուրբ Աւետարանս ի Մոկայ փոխադրեաց
 ի Թանգարանս սուրբ Աթոռոյս անկորուստ
 պահելու համար» (Լալայեանց , Յուց . հայ .
 Ձեռ . Վասպ . ի , էջ 636 եւ 1018) :

Ս . Գէորգ այժմ անսին եւ պարզ տա-
 ճարէ մը եւ դաւիթէ մը կը բաղկանայ : Գար-
 ձեալ ուխտաւորներու եւ ճամբորդներու հա-
 մար քանի մը սենեակ ունի : Տաճարին հարա-
 ւային կողմը փոքրիկ մատուռ մը կայ — որ
 գուցէ հին վանքին եկեղեցին ըլլայ : Հոն գե-
 րեզմանի մը մէջ Ս . Գէորգի ծնօտն ու աջն
 ամփոփուած են : Իսկ դաւիթին կամարակալ
 քարին վրայ քանդակուած է աքաղաղ մը եւ
 տակը գրուած՝

«Կերտեցան շինուածք սոյն մենաստանի
 կից նմին մատուռն հանգստեան տեղի ,
 Սրբոյն Գէորգայ քաջ զօրավարին
 Յար Հայոց աղգիս բարեխօս յերկին .
 Ի ձեռն Պաշատուր կաթողիկոսի
 եւ աստուածարեալ վեհ հայրապետի ,
 Ծախիւք եւ արդեամբք Արծրունեան մեծի ,

Տանն Աղթամարայ յաւէտ պանծալի
 Յամի Տեառն 1887 Յուլիս 16 :»

(Աղգր . Հանդ . , 1912 , էջ 97—99 եւ
 Նօտարք , էջ 54 , ծն . 1 :)

Ա . Չանոյեան «Բիւզանդիոն» թերթին
 մէջ (1903 , թ . 2156) . վանքին անունը կ'ուզէ
 ստուգարանել : Կը համարի թէ՛ «Փուլիու»
 ծագած է «փուլթ» բառէն , որ կը նշանակէ
 կուռք՝ շաստուած : Լալայեանց ալ հեթանո-
 սական հետք կը դտնէ (Աղգր . Հանդ . , 1912 ,
 թ . 1 , էջ 97)՝ «Փուլիու Ս . Գէորգի վանքը
 ամենայն հաւանականութեամբ փոխարինել է
 այն մեհեանին , որի նմանը Հայոց վերջին
 Տիգրանը շինել է իւր եղբայր Մաթան քրմա-
 պետի գերեզմանի վրայ՝ որպէս զի զոհերից
 բոլոր անցորդները վայելեն եւ հիւրերն ըն-
 դունուին գիշերն անցկացնելու համար» :
 «Բիւզանդիոն»ի խմբագրութիւնն (անդ) Չա-
 նոյեանի վարկածը թէեւ կը հրատարակէ ,
 սակայն դայն չ'ընդունիր : Չանոյեան դիտել
 կու տայ նաեւ որ՝ «Ներքին դաւառներու մէջ
 կը պատահինք՝ «պուրքան (= փուլթին)
 , պուրքան (= փուլթան) , պուրք կամ
 փուրք (= փուլթիկ կամ փուլթք) եւ այլ
 այնպիսի անուններու , որոնք ընդհանրապէս
 անանցանելի կիրճերու , լեռներու , ապառաժ
 քարերու եւ բնական յաղթ պատուարներու
 կը տրուին» (հմմտ . Բուլթ անունով վայրեր
 Միրախորեան , Ուղեւորութիւն , Բ . , էջ 35 .
 Բնաշխ . Բառարան , էջ 431 եւ Պատմութիւն
 սրբոց Հռիփսիմեանց , էջ 301) : Հետեւաբար
 Փուլիու Ս . Գէորգ կրնայ իր դիրքին ու
 դանուած տեղւոյն համար այսպէս կոչուած
 ըլլալ , այս է Սարի կամ ապառաժի կամ կիրճի
 Ս . Գէորգ : Մինչդեռ Նարլեան (Արեւ-
 ելք , 1894 , թ . 3030—3031) կանխաւ ուրիշ
 արտայայտութիւն բրած է : Անոր համեմատ
 վանքին անունն է Պուտքի Ս . Գէորգ եւ այդ
 անունը ծագած է «պուտուկ» բառէն : «Պու-
 տուկ Վանի Հայոց մէջ կը նշանակէ՝ հողեղէն
 կճուճ , չէօմլէհ» : Ու կը պատմէ աւանդա-
 վէպ մը , որուն համեմատ ծերուկ մը պտուկի
 կամ պուտուկի մէջ կը պահէ եղեր Ս . Գէորգի
 մասունքը (հմմտ . եւ Աղգր . Հանդ . , 1916 ,
 էջ 207) : Նարլեան դեռ կ'ըսէ (անդ , թ . 3031)
 «Կան մարդիկ ալ որ կ'ըսեն այդ վանքին
 փուլիէ անունը ծագում առած է կամ փո-
 թորիկ բառէն , որ սուրբ Գէորգի տարրն է
 արդէն եւ կամ փուլթանակի բառէն , քանզի
 սուրբ Գէորգ փուլթանակի կը հասնի վտան-

գելոց օգնութեան» (Հմմտ. նաեւ Աղգր. Հանդ., 1916, էջ 210): Նարլեան թէեւ այս մեկնութիւնը խելացի կը գտնէ, սակայն աւելի կը նախընտրէ պտուղէ յառաջգայութիւնը: Իսկ մեր կարծիքով պուտրգ կամ փութրգ բառերէն գուցէ առնուած է վանքին անունը կամ աւելի ճիշդը «փութկայ կամ փուտկայ» բառէն, որ կը նշանակէ պանդոկ, իջեւան» (Հմմտ. Աճառեան, Արմատական Բառարան, էջ 1306): Եւ արդէն Ս. Գէորգի վանքը ճամբորդներու ապաստանարան ու իջեւան եղած է ու է Հ. Վարդանեան կը հարցնէ թէ փուտկայ «բառին հետ կապ ունի՞ արդեօք փութկի Ս. Գէորգ իրրեւ իջեւան, օթեւան»: Եւ կը յաւելու՝ «Խ. Լեւոնեանի եւ Չանոյեանի կարծիքները թէ պրս. փութ (կուռք) բառէն ծագած ըլլայ փութկի (Բիւզանդիոն, 1903, թ. 2150 եւ 2156) շատ բռնադրօսիկ են իրենց պատճառարանութեանց մէջ» (Բառաքննական Դիտողութիւններ, Ա., Վիեննա 1913, էջ 114): Կը դիտեմ նաեւ որ՝ պարսկերէն պուտկաթաբառը կուտուեն եւ պանդոկ կը նշանակէ:

Խ. Լեւոնեանի համաձայն այս վանքը նմանապէս Սարի Ս. Գէորգ կամ Փութկի կամ Փութկու Ս. Գէորգ կոչուած է մերձաւոր փուկի կամ Փութկա գիւղին անունովը (Բիւզանդիոն, 1900, թ. 1194):

Եղերով սարը տարին տաս ամիս ձմեռ եւ երկու ամիս գարուն ունի: Ան բուքի, փոթորիկի, եւ սառնամանիքի վայր է: Վտանգաւոր է անոր վրայէն ճամբորդելը եւ սակայն ստէպ հարկաւոր: Որքաններ հոն սարսուռով մահը դիմաւորած են: Բայց բարեբաստօրէն Ս. Գէորգ Հայաստանի Ս. Բեռնարդոսն է: Սակայն սա կարեւոր տարբերութեամբ: Մինչ հոն շները վտանգեալներու օգնութեան կը փութան, հոս Ս. Գէորգ աքլոր⁴⁵ մը ունի, որ ճամբորդներուն կ'իմացնէ թէ ե'րբ անլտանդ կրնան ճամբորդել (Բիւզանդիոն, 1897, թ. 96, Նոյնը, 1903, թ. 2149. Շէրենց, Սրբավայրեր, էջ 133. Արեւելք, 1894, թ. 3031 եւ 1906, թ. 6332. Բնաշխ. Բառարան, էջ 431. Հմմտ. եւ «Վասպուրական», Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակի առթիւ, 1915—

1930, Վենետիկ 1930, էջ 228, ուր եւ սոյն նահանգի վանքերէն ոմանց մասին համառօտ տեղեկութիւններ եւ մի քանիին պատկերները էջ 226—230 եւն):

Փութկի Ս. Գէորգի հիմնարկութեան թուականն անծանօթ է:

Ոստանիկեան կը գրէ՝ «Թէպէտ հիմնարկութեան մասին ստոյգ բան մը քաղել կարելի չէ, սակայն մօտաւորապէս Արծրունեաց իշխանութեան օրով շինուած լինել թուի» (Արեւելք, 1887, թ. 1143): Իսկ Պաշիկ Լեւոնեան կը գրէ՝ «Այս վանքը բազմաթիւ միաբաններէ բաղկացեալ ճոխ դպրավանք մ'ունեցած է Ժէ.—ԺԶ. դարուն, ինչպէս կը ցուցնեն դրշաղիր յիշատակարանները (Բիւզանդիոն, թ. 2149): Կը զարգանայ Չաքարիա Բ. կաթողիկոսի օրովը շնորհիւ Սարգիս Սորբեցիի: Առաջնորդներէն է Յովհաննէս փիլիսոսիայ (Բիւզանդիոն, 1900, թ. 1194):

Չեռագիրներու մէջ յիշատակութիւններ կան Մոկաց աշխարհի մէջ գտնուած Ս. Գէորգ վանքի մը մասին, բայց կարելի չէ ստուգապէս ըսել թէ սոյն դաւառին մէջ գրտնուած համանուն ո'ր վանքը ակնարկուած է եւ կամ համանուն վանքերէն ո'ր մէկն է նշանակուած: Մի քանի տեղ Փութկու Ս. Գէորգ գրուած է եւ հետեւաբար կասկած չկայ որ անոնց մէջ սոյն վանքը նկատողութեան առնուած է: 1355ին գրուած Աւետարանի մը յաւելեալ յիշատակարանին մէջ կայ՝ «Աստուած ողորմի էվանդենց կաղարուն, որ վանաց արտն ռիւմարար ի դուռն Փութկի Ս. Գէորգայ» (Լալայեանց, Յուլ. հայ. Չեռ. Վասպ.ի, էջ 206—207, ուր տես եւ ուրիշ նուիրատուութիւններ, ինչպէս եւ անդ, էջ 636):

1418ին Կարապետ արեղան կը գրէ Մաշթոց մը՝ «յարքունական երկիրս Մոկաց ի յանապատիս Ս. Գէորգ եւ առաջնորդիս մերոյ որ անուն տէր Ստեփաննոս յորջորջած...» (Նօտարք, էջ 54, ուր այս խօսքեր Փութկայ Ս. Գէորգի համար կ'առնուին): — 1435ին Պետրոս արեղայի առաջնորդութեան ժամանակ «ի վանքս որ կոչի Ս. Գէորգ դաւրավար» Աւետարան մը կ'աւանդի (Լալայեանց, Յուլ. հայ. Չեռ. Վասպ.ի, էջ 372): — 1512ին «ի սուրբ ուխտս որ կոչի յանուն սրբոյն Գէորգեայ ի յերկիրս Մոկաց» կը գրուի ժամագիրք մը (Ոսկեան Հ. Հ., Մայր ցուցակ, Բ. անտիպ, էջ 646, կամ թ. 1014 Չեռագիր թղ. 146 ա): — 1560ին՝ «Գրեցաւ Աւետարանս ի

⁴⁵ Ս. Գէորգ ունի արջ մը, որ թոնիրի մօտիւրը կը մաքրէ, ուրիշ արջ մը, որ ցորենը ջաղացք կը աանի, աքլոր մը որ կը գուշակէ ճամբորդելու ժամանակը եւ ուռնի մը, որ խաղող կու տայ (Հմմտ. Ագաստամարտ, 1909, թ. 132):

յերկիրս Մոկաց ի վանքն սուրբ Գէորգայ զօրավարին յառաջնորդութեան սուրբ ուխտիս Յովսէփ վարդապետի եւ Ներսէս եպիսկոպոսի» (Արժուի Վասպ.ի, 1859, էջ 155—156 եւ Լալայեանց, Ջաւախք, էջ 289) : — 1688ին Աւետարան մը կը տրուի յիշատակ՝ «Ի դուռն Ս. Գէորգայ զօրավարին» (Ակինեան շ. Ն., շաւաք. Յիշատ., 1688, Երեւան, Ս. Պետրոս Պօղոս եկեղեցւոյն Աւետարանը, որ դուրսէ Մուղնի Ս. Գէորգի նուիրուած ըլլայ) :

Փութկու վանքի մէջ աւանդութեան համաձայն պահուած են Ս. Գէորգի ծնօտն ու աջը (համտ. վերը եւ Մասիս, 1892, էջ 111, ուր եւ վան-Վասպուրականի միւս վանքերու մասին ալ հակիրճ տողեր նուիրուած են) : Ս. Գէորգի սոյն մասունքը ժամանակ մը կը պահուի Պէդար գիւղի եկեղեցին (Բիւզանդիոն, 1904, Թ. 2289) :

Փութկու Ս. Գէորգի վանքը ունեցած է քիչ հող ու կալուած, բայց ունեցած է մեծ համբաւ իրրեւ հրաշագործ : Իր անունովը մեծամեծ գումարներ քովէ քով կը բերուէին⁴⁶ : Անոնցմէ մաս մը վանականներու բաժինն էր, մաս մը հոն ապաստանողներու կը յատկացուէր, իսկ մաս մըն ալ Աղթամարի կը յանձնուէր, քանի որ անոր իշխանութեան ենթակայ էր⁴⁷ : Յաւելունք՝ մաս մըն ալ հաւաքողները բացի իրենց արդար վարձքէն գաղտագողի իրենց կը սեպհականէին (Բիւզանդիոն, 1903, Թ. 2149, համտ. նաեւ Արժագանք, 1886, էջ 681—682) : Այս հանգանակութիւններու միջոցին խարէութիւններ եւ կեղծիքներ եւս կը սպրդէին (Բիւզանդիոն, 1903, Թ. 2149) :

Ն. Ն. ՈՍԿԵԱՆ

⁴⁶ Փիրղալէճեան կ'արտայայտուի՝ «Ամ ըստ ամէ քանի հազար դահեկան սուրբ Գէորգայ սակս ժողովնն անխափան, սորա տաճարն Մոկաց երկրին կայ սահման, Մերձ Եղերով լեռն, որ է իւր յանդիման» : (Չորս լնկերք որ է ճանապարհորդութեան վանայ մինչեւ Կ. Պոլիս, Թիֆլիս 1882, էջ 43) :

⁴⁷ Յովհաննէս ճահտեօին 1839ին Աղթամարի կաթողիկոսին յանձնարարականովը Պոլիս կու գար եւ կը ծանուցանէր որ Բուրա մը վանքին կը տիրանայ եւ վանահայրը կը սպաննէ եւ կը խնդրէ «Քէրճան» տալ իրեն շտիրապետել զնոյն սուրբ վանք : Խնդրին կարգադրութիւնը Պետրոս արքեպ. Կուրաղիին կը յանձնուի (Չեռագիր Վիենն. Միթիթարեան Մատենագարանի, Թիւ 703, էջ 63) :

ՍԵԼՆԵՉՈՐ-ԲԵՂԵՅԻ ՎԱՆՔԵՐԸ

Սալնոյ ձորը Աղձնեաց նահանգի գաւառներէն է, բայց յետագային իրրեւ Բաղէշի կամ Պիթլիղի գաւառ (ոչ՝ հին սահմաններովը) մաս կազմած է վանի նահանգին, որուն մէկ գաւառն ալ Մուշ էր : Բայց 1875ին Բաղէշ եւ Մուշ վանի նահանգէն բաժնուելով ի միասին մէկ նահանգ կը կազմեն :

1. ԱՓԱՆԱԳԻՆԷԻ ԿԱՄ ՄՈՃԿՈՆԻՅ ՎԱՆՔԸ

2. Սարգիսեան կը գրէ՝ «Տատիկ, մի ի գաւառացն է սա Աղձնեաց աշխարհին... ի վերջին ծայր գաւառիս լայնացեալ դաշտանայ ձորն հարուստ տարածութեամբ եւ լերինքն հանդիպակաց սահման հատանեն նորա եւ գաւառին Խիղանայ : Ի հիւսիսոյ կուսէ գեղատեսիլ դաշտավայրիդ ի բարձր գուրի է փոքրիկ մենաստան Աթանազինէ հայրապետին Մոճկոնից վանք կոչեցեալ յանուանէ գիւղին որ է առընթեր նորա...» (Տեղագրութիւնք, էջ 249) : Մոճկոնք գիւղի հիւսիսային կողմը, սարաւանդի մը վրայ հիմնուեր է Աթանազինէի կամ Մոճկոնից վանքը (Լուծայ, 1900, Ա., էջ 220. Սրուանձտեանց, Համով Հոտով, էջ 113), որուն եկեղեցին «Մատրանաչափ (է) եւ գուրկ ի միարանից եւ ի բնակարանաց, չիք նորա թեմ եւ ոչ մի» (Սարգիսեան, անդ, էջ 249) : Անձանօթ կը մնան այս վանքին ինչպէս հիմնարկութեան պարագաները, նաեւ գործունէութեան շրջանը : Յիշատակագրութենէ մը կ'իմացուի թէ՛ տաճարը 1633ին նորոգութիւն տեսած է¹ : Ունեցած է արտեր եւ ընդարձակ մարդագետին, պարտէզ ու ջաղացք², նաեւ ձեռագիրներ (Հայրենիք, 1893, Թ. 415, Բիւզանդիոն, 1897, Թ. 328. 1898, Թ. 508. 1907, Թ. 3368, Էփրիկեան, Բնաշխ. Բորն., էջ 182 եւ Լուծայ, 1900, Ա., էջ 220) :

2. ԱՄՐՏՕԼԻ ՎԱՆՔԸ

Ամրտօլի վանքը Կոլլոտի նկարագրութեան համաձայն կը բարձրանայ Բաղէշի

¹ Ս. Արիստակէս կը համարուի այս վանքին հիմնադիրը (Կալհօկեցի Պետ. Մ. Վ. Ասիական ճանապարհորդութիւն ի հայրենիս, Կ. Պ. 1881, էջ 53, ուր եւ Սալնաձորի միւս վանքերու մասին հակիրճ տողեր նուիրուած) :

² Մուշի վանքերու շարքին մէջ եւս պիտի անդրադառնանք այս վանքին, ինչպէս նաեւ ուրիշ քանի մը վանքերու, որոնց մասին այս տեղ կա՛մ քիչ խոսուած է եւ կամ ամենեւին :